

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Յանուար ամսոյն 19ին մեր բարեկամն պր. Կ. Քասանդանն կը գրէր հետեւեալ նամակը՝ ի պատասխանի՝ մեր առ ինքն գրած քանի մը հարցմանց՝ նկատմամբ «ԱՐԱՐԱՅ» ամսագրին (նոյեմ. 1896) մէջ Գեր. Մմբատ, եանցի հրատարակած բնեշագրին։ Մեր քղրակցին այս նամակը՝ քակտեւեալ առանձնական էր, սակայն որովհետեւ յիշեալ ամսագրին մէջ ի լոյս ընծայուած բնեշագրին ընթերցումով կը պարտունակէ, պատշաճ համարեցանք զայն հրատարակել թերթիս միջոցաւ ի գիտութիւն նոյն մասնաձիգող զբաղող քանակներաց։ Դարձեալ յարգող նամակագիրն այն թղթովն Մարիբաայ ցրող գիտի տեղւոյ մասին մէկ թիւթիմացոյցիսը ես կ'աղղկէ՝ զոր նախընթացաբար ՅԱՐԱՐԱՅԻ մէջ հրատարակելու էինք։

... Աբբու ամսագրի նոյեմբերի պրակն ուրիշ տեղէ ձեռք անցուցի, ե երկու օր յաւաք ալ նոյն ինքն Գեր. Մմբատեանց մասնաւոր նամակաւ հաղորդեց ինձ իւր վերջին գրութիւնը՝ ուղարկելով նաև Աբբուի մէջ հրատարակուած պատկերն ու նոյն օրը մինչև կէս գիշեր աշխատելով վրան՝ կարգացի եւ մեկնեցի։ Աստուծոյ զօրութեամբ ի գլուխ հանելուս պատճառն այն է՝ որ տառերը հինգ տեղ կտրուած են եւ հինգ տեղ ալ պակասաւոր գրուած։ Բայց յայտնենք, արձանագրութեան մէջ նմանեցի զաղափարաւ նշան մը՝ կտրուած, որուն առաջին անգամն ըլլալով կը հանդիպիմ տառակաւ ընտելագրութեան մէջ։ Այս զաղափարանշանն է  (= Վ), որ պէտք է նշանակէ անպատճառ «չէմ», կալուած, հաստատութիւն», եւ կամ ասոնց մօտ բան մը. որովհետեւ արձանագրութիւնը կ'ըսէ — «Արգիշտին Միւնուաշեան զայս ըս չինեաց...», ու նոյնպէս այս արձանագրութեան մէջ թուրքովին նոր բառի մըն ալ հանդիպեցայ, որուն նշանակութիւնն բոլորովին անհասկնալի էր. բայց պարբերութեան ամբողջական իմաստէն հետեւեցի թէ պէտք է նշանակէ «վաս», եւ կը մնար վերջին բառն, որ թէ եւ կիտով կտրուած

բայց անոր մօտ ուրիշ բառի մը գոյութիւնը քիչ մը դիւրացուց ընթերցումս եւ թարգմանութիւնս։ Ուստի, կրնաք հասկնալ թէ ինչո՞ւ այնքան չարարուեցայ մինչև կէս գիշեր՝ տող մը բանը կարդալու եւ մեկնելու համար։ Ահաւաստի ամբողջ արձանագրութեան ընթերցումս։

(յ. մ.) Ար-գ[ի]-ի-շտ-ի-չ(է) (յ. մ.) Մի-
[նու]-ա-ա-ի-ն-ի-չ(է) ի-ն-ի ըս զա-դո-ն-ի
[գ]ո-ի [ա]ր-[ի]ն-ի-ա-ն-ի. այսինքն է —
«Արգիշտին Միւնուաշեան զայս կալուած
չինեաց վասն սերնդոց (իւրոց)»,։

Թէև այսպէս կարողացի եւ թարգմանեցի, բայց կարելի է որ տարբեր ըլլայ բնագիրն. որովհետեւ Մի-[նու]-ա-ա-ի-ն-ի-չ(է) ա- նուան վերջի երկու վանկերն միացեալ ըստ ալ կը կարդացուի. եւ արդեամբք ալ չի չէ՝ գրուած տառն, այլ աւելի հասանալիս է ... նի-չէ կարդալու տեղը ... նաւ կարգաւ։ Այսպէս նաև կտրուած զաղափարանշանն թէ, բեւ ըլլայ  (= Վ)՝ որ այն տառն կը նշանակէ «տուն», առանց տարակուսի վերջապէս՝ աւելի ապահով ըլլալու համար պէտք է տեսնել կամ. բնագիրն, եւ կամ թղթի վրայ առնուած կաղապարն, որուն հետ մար այսօր գրեցի Գեր. Մմբատեանցին։

Մարիբաայ նկատմամբ այսպիսի բան թէ մեծ լոյս մը չի տալեր, ինչպէս կ'երեւայ Պր. Կարբէրի գրութենէն. եւ քանի որ խորեանցւոյ հետ մասնութիւններ չունի՝ ինչո՞ւ պնդել թէ այն գրութիւնը Մարիբա «Կա տինայի», կը պատկանի։ Ուրիշ Մարիբա, ներ շատ, Աստուծոյ ալ կը յիշատակէ Մարիբա մը. նոյնպէս կը յիշեմ ուրիշ Մարիբա մըն ալ, որ եկեղեցական — պատմական գրուածներ ունի. բայց «Կատինայ», ածականը չեն կրեր եւ ոչ մէկը, ինչպէս պընդելու ըլլան որ անպատճառ «Կատինան», է այս Մարիբան, այն տառն եւ ալ կ'ընեմ թէ Կատինային յունարէն բնագրին խորեանցին օգտուելէն յետոյ ուրիշ ժամանակաւ գիր մը, թերեւ Սուրիացի, Միքայէլի հրաժանաւ թարգմանած ըլլայ ի քարոզին, միայն իրեն հարկաւոր մասերն քաղելով մէջէն։ Կարբէր մինչև վերջերս կը պնդէր թէ Մարիբա Կատինայ եւ խորեանցի միջև նոյն անձն է. բայց Հոնք. Թոմ. յունաւոր պրակն մէջ հրատարակուած իրեն նամակն այսպէս կը տեսնուի թէ կարծիքը փոխած է այժմ. Յամենայն դէպս, ամէն ինչորով մէջ ապահով դատաւարան ընելու համար պէտք է բնագիրն ունենալ մեր առջև։ — Իմ Արեւելեան կենդանի յեղաշարժարանէն Մարիբա փնտր

ուելս, և Կարթէրի խօսքն՝ թէ Ազգ. մատե-
նադարանին մէջ գտած է գայն, թիւրթ-
մացութեան մը արդիւնք է. որովհետեւ՝ ինչ-
պէս ներքինեայ նամակէն պիտի հասկընաք,
պաշտօնապէս չէի կրնար յաճախել յիշեալ
վարժարանին Մատենադարանն. ուստի ան-
պաշտօն կերպով տեսնուեցայ պաշտօնէին
հետ և բարեկամութեամբ խօսք բացի Կար-
թիէրի և նորագիւտ Մարիբաւայ վրայօք,
յայտնելով փափագս թէ ի՞նչպէս կրնամ տես-
նել արդեօք ձեռագիրն. պատասխան ընդու-
նեցայ թէ Կարթիէրին քոջն է, առանց սա-
կայն խօսքն ընելու թէ ձեռագիրը կը պատ-
կանի Bibl. Nat.:



ՇԻՐԱԿ ԳԱՒԱՌԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՍԹԻՒՆՔ

Հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնը
բաղուածայ կը հրատարակենք Շիրակացի բա-
նասիրի մի թղթէն, զոր նոյն ինքն ուղղեր
է առ Վ. Հ. Ղևոնդ Վ. Ալիշան՝ նորա
կարծիքը իմանալու համար, հանդերձ նա-
մակին մէջ յիշուած տարակայնի բաւանկար
պատկերով:

Յիշեալ բանասէրն լսած լինելով տեղացի
ծերունիներէն, թէ իւր բնիկ ծննդավայրի
ընթացիկները կամ մանաւանդ գերեզմաննե-
րուն մէջ կը գտնուին եղեր այլևայլ հնա-
թիւններ, իրեն առանձին ծախիւքն սկսեր է
պեղումներ ընել. և յերաւի բազմաթիւ հին
տաքականի գտնելու բարեբախտութիւնն կ'ու-
նենայ, ասկայն առանց կարենալու ստուգել,
թէ արդեօք իրեն ինքնապրած կամ յուսացած
հնութիւնն ունին նորա: Ինչ ինչ նշաններ
կ'երևին նոցա վերայ, ինչպէս կը խորհրդա-
ծէ յարգ. Նամակագիրն, որ մինչև անգամ
հեթանոսութեան հետքեր կը թուին. բայց
հազիւ թէ վայրկեան մի միայն մարդու միտքն
այդ անշնչ երազով կ'որոտուի, իսկոյն ստուե-
րի նման կը ցնդի այդ մտածութիւնն, երբ
կը յիշէ այն բոլոր աւերածները, քանդու-
մները, աւերակարութիւնները, վայրագ և բա-
բարս ժողովրդաց յարձակումները, որոց քրե-

թէ ամենօրեայ թաւար եղած է այդ աշխարհն
ի սկզբանէ հետէ: Ուստի, կը հրատարակենք
այս տեղեկութիւնները՝ հասկուղիք և մաս-
նագիտաց հետաքրքրութիւնը շարժելու համար
միայն, որպէս զի՝ եթէ այդ գիտն ունի ինչ
կարևորութիւն յայն նոցա՝ այնու զբաղին,
և հաւատարի ստուգեն նոցա հնութիւնը և
հարազատութիւնը կամ ոչ. հետևաբար մեր
վերայ որ և է պատասխանատուութիւն չենք
ստանձնէր. մանաւանդ որ՝ ոչ միայն կը զը-
ժուարիւնք հաւատալու այն կարծուած հնու-
թեան, այլ և նոյն իսկ քրիստոնէութեան
մուտ գտնելէն քանի մի դար յետոյ մնացորդ
հեթանոսութեան վերջին նշխարները կը հա-
մարինք:

Նամակին գրութեան ոճոյն և լեզուին չու-
ղելով ամենևին փոփոխութիւն ընել, կը հրա-
տարակենք զայն զորաբար լեզուով՝ ինչպէս
որ գրուած էր: Ի՞նչ երջանիկ տարիներ են
սոքա, որոց պահուներ են այսպիսի շնաշխար-
հիկ գիւտեր. երէկ՝ Մար Արաքս Կատիկա,
այսօր՝ հեքաճոս հայոքեան հնոգրիւնք...

«... Զհնոցն ձեռագործն թերեւ յետ քա-
ռատուն և աւելի կամ նուազ դարուց, ի լոյս
բերեալ իմով իսկ աշխատութեամբ, յղեմ ի
տես և ի գնին հայրենակարոտ աչաց Սի-
րելոյ Հայրութեանդ:

Իցե՛ն արդեօք զործք մտաւոց նախնեացն
մերոց, տարակուսիմ. իմաստութիւնն Զրեւ և
բազմառատ հմտութիւն ևեթ հասցէ զճգրիտ
վճիռն դատաստանի:

Զբոլորն գտեալ է իմ ի գերեզմանական
զգոց ծածկելոց ընդ հողով 2—2 1/2 չափ
(մետր) խորութեամբ: Գուքն է բոլորչի,
մեռեալն բազում անգամ ի նիստ և ընկող-
մեալ պատահի, դուն ուրեք ձիգ պարգեալ:
Զօրէն առն կենդանոյ՝ մերթ մի ձեռն ի
ծնօտի և միւսն ընդ երկար ի վերայ ադ-
գերն, մերթ մի թևն ի ներքոյ գլխոյն և միւսն
կիսածալ ի վերայ լանջաց և որովայնի, և
մերթ ևս ի նիստ, և երկոքին բազուկքն խա-
չեալք ի վերայ ծնկացն: Ի պեղելն գրեթէ
ընդ միշտ նախ երևին գագաթն և ասրտաթի-